ՆԱԳԱՍԱԿԻԻ ԾՈՑԸ

Յունիսի առաւօտը նոր էր ծագում, երբ մեր առջեւը ծովի մէջ նկարւեցին ճապոնական լեռների անորոշ գծերը:

Առաւօտը թարմութիւն ու զով էր շնչում:

Եւ կուրծքը ազատ ու թեթեւ էր շունչ քաշում:

Անընդհատ շարքով ճգւում էին սարերը, մեր ամեն շարժումին նկատելի կերպով աճելով, մինչեւ որ երկու կողմից մեզ բոլորովին մէջ առան:

Մտանք Նագասակիի ծոցը, Ճապոնի նախադուռը:

Սքանչելի է այդ ծոցը:

Նա սուր գալարուն օձի պէս խորը խրւում է ցամաքի մէջ եւ ձեզ մի անգամից փոխադրում է մի այլ, ուրոյն աշխարհ, ուր ամեն-ինչ զարմանք է պատճառում ձեր աչքերին իր մինիատիւր չափերով:

Բաց ծովը թողնելուց յետոյ շոգենաւը մտնում է նեղ ու երկար նեղուցը եւ առաջ է սողում բլրոտ ու անտառապատ մանրիկ կղզեակների ամբողջ մի լաբիրինտի միջով:

Կանաչ պուրակների անդրադարձումները իրար կցւում են ջրի մէջ, ծածկում են ծովի ամբողջ մակերեսը՝ ջրի մէջ մի նոր ցոլածու անտառ կազմելով:

Շոգենաւը առաջ է գնում այդ իրար հիւսող կանաչի խիտ ցանցի միջով, յամառ ու անխնայ պատռտելով նրան:

Կղզեակները առաջ են վազում աջից, ձախից, դէմ են տալիս իրանց կուրծքը նրա ճամփին, կարծես ուզում են առաջը կտրեն, կանգնեցնեն շոգենաւի արագ ընթացքը: Բայց յանկարծ նորից բացւում է բարակ նեղուցը – եւ նորից առջեւդ զմրուխտ կղզիներ: